ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 1

ԵՐԵՎԱՆ - ЕРЕВАН - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2021

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆ. **Էդիկ Մինասյան**

Խմբագրական խորհուրդ՝

Միքայել Մալխասյան (խմբագիր, պ.գ.թ., դոց.), **Աշոտ Մելքոնյան** (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆ.), **Արամ Սիմոնյան** (ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պ.գ.դ., պրոֆ.), **Ալբերտ Ստեփանյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկ Ավետիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Լևոն Չուգասզյան** (արվ.գ.դ., պրոֆ.), **Համլետ Պետրոսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Արման Եղիազարյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հայկազ Հովհաննիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Ներսիսյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Աշոտ Հայրունի** (պ.գ.դ., պրոֆ.), **Վալերի Թունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Վանիկ Վիրաբյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Ռաֆիկ Նահապետյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հակոբ Հարությունյան** (պ.գ.դ., պրոֆ.), **Հովիկ Գրիգորյան** (պ.գ.թ., դոց.), **Մխիթար Գաբրիելյան** (պ.գ.թ., դոց.), **Էդգար Հովհաննիսյան** (պ.գ.թ., դոց.), **Տիգրան Գևորգյան** (պ.գ.թ., ասիստ.):

Главный редактор - докт. ист. наук, проф. **Эдик Минасян**

Редакционная коллегия:

Микаэл Малхасян (редактор, к.и.н., доц.), **Ашот Мелконян** (академик НАН РА, д.и.н., проф.), **Арам Симонян** (чл.-кор. НАН РА, д.и.н., проф.), **Альберт Степанян** (д.и.н., проф.), **Айк Аветисян** (д.и.н., проф.), **Левон Чугасзян** (д. иск. н., проф.), **Гамлет Петросян** (д.и.н., проф.), **Арман Егиазарян** (д.и.н., проф.), **Айказ Оганесян** (д.и.н., проф.), **Ашот Нерсесян** (д.и.н., проф.), **Ашот Айруни** (д.и.н., проф.), **Валерий Тунян** (д.и.н., проф.), **Ваник Вирабян** (д.и.н., проф.), **Рафик Наапетян** (д.и.н., проф.), **Акоб Арутюнян** (д.и.н., проф.), **Овик Григорян** (к.и.н., доц.), **Мхитар Габриелян** (к.и.н., доц.), **Эдгар Оганнисян** (к.и.н., доц.), **Тигран Геворгян** (к.и.н., асист.).

Editor-in-Chief: Doctor of Sciences, Prof. **Edik Minasyan**

Editorial Board:

Mikayel Malkhasyan (Editor, PhD in History, Associate Prof.), **Ashot Melkonyan** (Academician of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Aram Simonyan** (Corresp. Member of NAS RA, Doctor of Sciences, Prof.), **Albert Stepanyan** (Doctor of Sciences, Prof.), **Hayk Avetisyan** (Doctor of Sciences, Prof.), **Levon Chugaszyan** (Doctor of Arts, Prof.), **Hamlet Petrosyan** (Doctor of Sciences, Prof.), **Arman Yeghiazaryan** (Doctor of Sciences, Prof.), **Haikaz Hovhannisyan** (Doctor of Sciences, Prof.), **Ashot Nersisyan** (Doctor of Sciences, Prof.), **Asot Hayruni** (Doctor of Sciences, Prof.), **Valeri Tunyan** (Doctor of Sciences, Prof.), **Vanik Virabyan** (Doctor of Sciences, Prof.), **Rafik Nahapetyan** (Doctor of Sciences, Prof.), **Hakob Harutunyan** (Doctor of Sciences, Prof.), **Hovik Grigoryan** (PhD in History, Associate Prof.), **Mkhitar Gabrielyan** (PhD in History, Associate Prof.), **Edgar Hovhannisyan** (PhD in History, Associate Prof.), **Tigran Gevorgyan** (PhD in History, Assistant Prof.).

ISSN 1829-2771

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ
СОДЕРЖАНИЕ / CONTENT

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ / ИСТОРИЯ / HISTORY

Виген Цатрян, Руслан Кобзарь - К ВОПРОСУ О ЛОКАЛИЗАЦИИ И ЭТИМОЛОГИИ БАСОРОПЕДЫ В СВЕТЕ ЗАВОЕВАНИЙ АРТАШЕСА I У МИДЯН 7

Վիգեն Ծատրյան, Ռուսլան Կոբզար – ԲԱՍՈՐՈՊԵԴԱՅԻ ՏԵՂՈՐՈՇՄԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԱՐՏԱՇԵՍ Ա-Ի ՄԵԴԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ..... 22

Vigen Tsatryan, Ruslan Kobzar – TO THE QUESTION OF THE LOCALIZATION AND ETYMOLOGY OF BASOROPEDA IN THE LIGTH OF THE CONQUESTS OF ARTASHES I FROM THE MEDES..... 22

Արգիշտի Վարդանյան – ՄԱՄԻԿՈՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔԻ ՏՈՀՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՃՇԳՐՏՈՒՄ..... 23

Аргишти Варданян – ОДНО УТОЧНЕНИЕ ПРАВЯЩЕЙ ДИНАСТИИ МАМИКОНЯНОВ 29

Argishti Vardanyan – A CORRECTION OF THE GENEALOGY OF THE MAMIKONYANS PRINCELY FAMILY 29

Միքայել Մալխասյան - 16-ՐԴ ԴԱՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝ ԱՌԱՆՁԻՆ ՎԱՐՉԱՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ..... 30

Микаэл Малхасян - ОБЩАЯ КАРТИНА РАСПРЕДЕЛЕНИЕ НАСЕЛЕНИЯ В АРМЕНИИ В XVI ВЕКЕ НА ПРИМЕРЕ ОТДЕЛЬНЫХ АДМИНИСТРАТИВНЫХ ЕДИНИЦ..... 38

Mikayel Malkhasyan - GENERAL PICTURE OF POPULATION DISTRIBUTION IN ARMENIA IN THE 16TH CENTURY ON THE EXAMPLE OF SEVERAL ADMINISTRATIVE UNITS.....38

Ֆելիքս Մովսիսյան - «ՄԱՍՅԱՑ ԱՂԱՎՆԻ» ԱՄՍԱԳԻՐԸ ՀՌՈՄԻ ՊԻՈՒՍ IX ՊԱՊԻՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՁՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ..... 39

Феликс Мовсисян - ЖУРНАЛ «МАСЬЯЦ АГАВНИ» («МАСИССКИЙ ГОЛУБЬ») О ЛИШЕНИИ СВЕТСКОЙ ВЛАСТИ ПАПЫ РИМСКОГО ПИЯ IX 54

Feliks Movsisyan - THE MAGAZINE "THE MASYATS AGHAVNI'' ON DEPRIVATION OF POPE PIUS IX OF HIS SECULAR POWER..... 55

Հովիկ Գրիգորյան - ՀՅԴ ՑՈՒՑԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԻՏՈՇԻ ԱՂԵՏԻՆ ՀԱՋՈՐԴԱԾ ԱՄԻՍՆԵՐԻՆ (1905 Թ. ՄԱՐՏ - ՀՈՒԼԻՍԻ ԿԵՍԵՐ).....56

Овик Григорян - ДЕЯТЕЛЬНОСТЬ УКАЗЫВАЮЩЕГО ОРГАНА АРФ ДАШНАКЦУТЮН В МЕСЯЦЫ, ПОСЛЕДУЮЩИЕ ЗА ТРАГЕДИЕЙ НА ВИТОШЕ (МАРТ - СЕРЕДИНА ИЮЛЯ 1905 Г.) 72

Hovik Grigoryan - THE ACTIVITIES OF THE INDICATIVE ORGANIZATION OF ARF DASHNAKSUTYUN IN THE MONTHS AFTER THE VITOSH DISASTER (FROM MARCH TO MID-JULY, 1905)..... 73

Գայանե Հովհաննիսյան – ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ - 1930-ԱԿԱՆ ԹԹ. 74

Гаяне Оганнисян – ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В НАГОРНО-КАРАБАХСКОЙ АВТОНОМНОЙ ОБЛАСТИ ВО ВТОРОЙ ПОЛОВИНЕ 1920-Х ГГ. – В 1930-Х ГГ..... 82

Gayane Hovhannisyan – DEMOGRAPHIC PROCESSES IN THE NAGORNO-KARABAKH AUTONOMOUS REGION IN THE SECOND HALF OF THE 1920S – IN THE 1930S..... 83

Էդիկ Մինասյան, Արտավազդ Դարբինյան - ԵՐԵՎԱՆԻ ԲՈՒՀԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ (1991-1994 ԹԹ.).....84

Эдик Минасян, Артавазд Дарбинян – ОБ УЧАСТИИ СОТРУДНИКОВ И СТУДЕНТОВ ЕРЕВАНСКИХ ВУЗ-ОВ В ПЕРВОЙ АРЦАХСКОЙ ВОЙНЕ (1991-1994 ГГ.). 89

Edik Minasian, Artavazd Darbinian – THE PARTICIPATION OF YEREVAN UNIVERSITIES IN THE FIRST ARTSAKH WAR (1991-1994) 89

Դավիթ Բարսեղյան - ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ԿՈՐՊՈՒՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 90

Давит Барсегян – ЗНАЧЕНИЕ КОРПУСА СТРАЖЕЙ ИСЛАМСКОЙ РЕВОЛЮЦИИ В ОБЕСПЕЧЕНИИ ВНУТРИПОЛИТИЧЕСКОЙ СТАБИЛЬНОСТИ 95

Davit Barseghyan – THE IMPORTANCE OF THE ISLAMIC REVOLUTIONARY GUARD CORPS IN ENSURING INTERNAL POLITICAL STABILITY 95

Լիլիթ Մակարյան – ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920 Թ. ԵՎ 2018 Թ. ԻՇԽԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ (ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ) 96

Лилит Макарян – ПОЛИТИЧЕСКАЯ СИТУАЦИЯ В АРМЕНИИ В 1920 Г. И В 2018 Г. ПОСЛЕ СМЕНЫ ВЛАСТИ (СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ) 103

Lilit Makaryan – THE POLITICAL SITUATION IN ARMENIA IN 1920 AND IN 2018 AFTER THE POWER SHIFT (COMPARATIVE ANALYSIS) 103

Էդիկ Մինասյան – «ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ ... 104

Эдик Минасян – ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА 113

Edik Minasyan – ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY 114

Էդգար Չախոյան – ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՎԵՐԱԴԱՍԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆ-ԱՄՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ (1991-2019 ԹԹ.) 115

Эдгар Чахоян - ВОПРОСЫ ПЕРЕГРУППИРОВКИ ВООРУЖЕННЫХ СИЛ В КОНТЕКСТЕ ОТНОШЕНИЙ ГРУЗИИ И США НА ЮЖНОМ КАВКАЗЕ (1991-2019 ГГ.) 134

Edgar Chakhoyan - ARMED FORCES REDEPLOYMENT ISSUES IN THE CONTEXT OF GEORGIA-US RELATIONS IN THE SOUTH CAUCASUS (FROM 1991 TO 2019) 135

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ / АРХЕОЛОГИЯ И ЭТНОГРАФИЯ / ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

Ռաֆիկ Նահապետյան – ԱՂԶՆԻՔԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 136

Рафик Наапетян – ОБ ИЗУЧЕНИИ ЖИЛЫХ КОМПЛЕКСОВ АГДЗНИКА (ВТОРАЯ ПОЛОВИНА XIX В. И НАЧАЛО XX В.) 146

Rafik Nahapetyan – ON STUDYING OF RESIDENTIAL COMPLEXES OF AGHDZNIK (SECOND HALF OF THE 19TH CENTURY AND THE BEGINNING OF THE 20TH CENTURY) 147

Արտակ Խաչատրյան – ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԻ ԷԹՆՈԳԵՆԵԶԻՍԻ ՓՆՏՐՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԼՂԻՄ-ՈՒՄ 148

Артак Хачатрян – ПОИСКИ ЭТНОГЕНЕЗИСА АЗЕРБАЙДЖАНЦЕВ И КУЛЬТУРНАЯ ПОЛИТИКА В НКАО. 155

Artak Khachatryan – THE SEARCH FOR THE ETHNOGENESIS OF AZERBAIJANIS AND CULTURAL POLICY IN THE NKAO 155

ԱՐՎԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ / ИСКУССТВО И КУЛЬТУРА / ART AND CULTURE

Աննա Դավթյան – 13-ՐԴ ԴԱՐԻ ԽԱՉՔԱՐԵՐԻ ԶԱՐԴԱՁԵՎԵՐԸ 156

Анна Давтян - ОРНАМЕНТЫ ХАЧКАРОВ XIII ВЕКА 164

Anna Davtyan - THE ORNAMENTS OF THE 13TH CENTURY KHACHKARS (CROSS-STONES) 164

Ռուզաննա Միքայելյան – ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ՀՈԿՏԵՄԲԵՐ» ԿԻՆՈԹԱՏՐՈՆԻ ԻՆՏԵՐԻԵՐ ԴԻԶԱՅՆԸ 172

Рузанна Микаелян – ДИЗАЙН ИНТЕРЬЕРА КИНОТЕАТРА «ОКТЯБРЬ» В ГОРОДЕ ГЮМРИ 175

Ruzanna Mikayelyan – THE INTERIOR DESIGN OF CINEMA "HOKTEMBER" IN GYUMRI 176

Զահրա Մալեքի – ՀԱՖԵԶԻ ԳԱԶԵԼՆԵՐԸ ՖԱՐԱՀ ՕՍՈՒԼԻԻ ԱՉՔԵՐՈՎ 177

Захра Малеки – ГАЗЕЛИ ХАФИЗА ГЛАЗАМИ ФАРАХ ОССУЛИ 187

Zahra Maleqi – HAFEZ'S GAZELLES AS SEEN BY FARAH OSSULI 187

Մարինե Գևորգյան, Գայանե Թովմասյան – ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ ԵՎ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 188

Марине Геворкян, Гаяне Товмасян – ВОВЛЕЧЕНИЕ ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ ПАМЯТНИКОВ АРАГАЦОТНСКОЙ ОБЛАСТИ РА В СФЕРУ ТУРИЗМА И АНАЛИЗ ВОЗМОЖНОСТЕЙ РАЗВИТИЯ ТУРИЗМА В РЕГИОНЕ 198

Marine Gevorgyan, Gayane Tovmasyan – INVOLVEMENT OF HISTORICAL AND CULTURAL MONUMENTS OF ARAGATSOTN REGION OF THE RA INTO TOURISM SPHERE AND THE ANALYSIS OF TOURISM DEVELOPMENT OPPORTUNITIES IN THE REGION 198

ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ / ИСТОЧНИКОВЕДЕНИЕ / SOURCE STUDIES

Լիլիթ Հակոբյան – ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ» ԵՐԿՈՒՄ 199

Лилит Акобян - СОГЛАСОВАНИЕ ЧЛЕНОВ ПРЕДЛОЖЕНИЯ И ЕГО ВЫРАЖЕНИЕ В ПРОИЗВЕДЕНИИ "ИСТОРИЯ АРМЕНИИ" КИРАКОСА ГАНДЗАКЕЦИ 204

Lilit Hakobyan – PECULIARITIES OF THE AGREEMENT BETWEEN THE SENTENCE PARTS AND ITS EXPRESSION IN KIRAKOS GANDZAKETSI'S "HISTORY OF THE ARMENIANS" 205

Վահագն Հակոբյան – ԴԱՎԻԹ ԱՆԱՆՈՒՆԻ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ 206

Ваагн Акобян – ИЗ ПЕРЕПИСКИ ДАВИТА АНАНУНА 218

Vahagn Hakobyan – FROM DAVID ANANUN'S LETTERS 218

ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ / УЧЕБНО-МЕТОДИЧЕСКИЙ / EDUCATIONAL-METHODOLOGICAL

Լիլիթ Մինասյան - ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ ՈՐՊԵՍ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ (ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ) 219

Лилит Минасян - ИСПОЛЬЗОВАНИЕ ИСТОЧНИКОВ НА УРОКАХ ИСТОРИИ ДЛЯ РАЗВИТИЯ ИСТОРИЧЕСКОГО И КРИТИЧЕСКОГО МЫШЛЕНИЯ УЧАЩИХСЯ (ИССЛЕДОВАНИЕ ДЕЙСТВИЙ) 229

Lilit Minasyan - USING SOURCES IN THE HISTORY CLASSROOM FOR DEVELOPING STUDENTS' HISTORICAL AND CRITICAL THINKING (ACTION RESEARCH) 229

Մերի Հովհաննիսյան - «ԴԵԲԱՏ» ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 230

Мери Оганнисян - ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ МЕТОДА ДЕБАТОВ 236

Meri Hovhannisyan - FEATURES OF USING THE DEBATE METHOD 236

Արմեն Խաչիկյան – ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՉԱՓՄԱՆ ՌԱԶՄԱՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ. ՍՈՑԻՈՄԵՏՐԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ 237

Армен Хачикян – ВОЕННО-СОЦИОЛОГИЧЕСКАЯ МЕТОДОЛОГИЯ ИЗМЕРЕНИЯ ЛИДЕРСТВА В ВОИНСКИЙ КОЛЛЕКТИВАХ. ПРИМЕНЕНИЕ СОЦИОМЕТРИЧЕСКОГО МЕТОДА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА 246

Armen Khachikyan – MILITARY SOCIOLOGICAL METHODOLOGY OF MEASURING LEADERSHIP IN MILITARY TEAM. APPLICATION OF SOCIOMETRIC METHOD IN THE RA ARMED FORCES 246

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ / РЕЦЕНЗИИ / REVIEWS

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ, ՄԻՔԱՅԵԼ ՄԱԼԽԱՍՅԱՆ, ԼԻԱՆՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, ՀԱՅԱՍՏԱՆՆ ԸՍՏ ԱՆՏԻԿ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՐԴԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՔՐԵՍՏՈՄԱՏԻԱ), ԵՐԵՎԱՆ, ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, 2020, 388 ԷՋ: 247

ՀՈՎՆԱՆ ՁԱՆՅԱՆ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՂԱՋԱՆՅԱՆ), ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ, ԵՐ., ԷԴԻՏ ՊՐԻՆՏ, 2020, 448 ԷՋ: 247

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՆԸՆԴՄԵՋ ՇՂԹԱՆ ԴԱՐԵՐԻ ԽՈՐՔԻՑ ՄԻՆՉԵՎ XXI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ (ՊԱՏՄԱԲԱՆ-ՄԻՋԱԶԳԱՅՆԱԳԵՏԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ), ԵՐԵՎԱՆ, ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏ., 2020, 428 ԷՋ: 250

ՆՈՐ ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԵՐՈՍ ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ (Э. Г. МИНАСЯН, АРМЯНКИ В ГОДЫ ВТОРОЙ МИРОВОЙ И ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЫ (1939-1945), МОНОГРАФИЯ, РОСТОВ-НА-ДОНУ–ТАГАНРОГ, ИЗ.-ВО ЮЖНОГО ФЕДЕРАЛЬНОГО УНИВЕРСИТЕТА, 2021, 284С.) .. 252

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ 255

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ 258

ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴ

ՀԱՅՐԱՊԵՏ ՄԱՐԳԱՐՅԱՆ (1950-2021) 263

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ 266

INFORMATION ABOUT THE AUTHORS 267

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ 268

NOTICE FOR THE AUTHORS 268

«ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ» ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՈՒՄ ԳՐԱՆՑՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ 269

Էդիկ Մինասյան

«ԹՈՒՖԵՆԿՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ 20-ՐԴ ԴԱՐԱՎԵՐՋԻՆ ԵՎ 21-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՈՒ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐՈՒՄ[1]

Հիմնաբառեր. հիմնադրամ, տնտեսական ծրագրեր, Արցախ, «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամ, Ստեփանակերտի գրասենյակ, ֆինանսական միջոցներ, հողագործություն, անասնապահություն, բնակարանաշինություն, մելիորատիվ աշխատանք, ջրանցքներ, էլեկտրական գծեր:

Հոդվածում համապատասխան փաստերի քննական վերլուծությամբ ցույց են տրվում «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի կատարած մեծածավալ աշխատանքները Արցախի տնտեսության զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման և կենսագործման բնագավառում: Հիմնադրամը, Արցախի տնտեսության մեջ ներդրումներ կատարելուց բացի, իրականացրել է այնպիսի ծրագրեր, որոնք մարդկանց հնարավորություն են տվել զարգացնել տնտեսությունը, դառնալ սեփականատեր, մնալ սահմանամերձ գյուղերում, ապահով ու հարմարավետ պայմաններ է ստեղծել վերաբնակեցման համար, ընդլայնել է բնակարանաշինությունը, ստեղծել ենթակառուցվածքներ՝ հոսանք, ճանապարհներ, խմելու և ոռոգման ջուր, հաղթահարել աղքատության մակարդակը և այլն:

Հադրութի շրջանի նորակառույց Առաջամուղ գյուղի հովանավորչական ծրագրի իրականացման օրինակով բացահայտվում են «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից տնտեսական զարգացման շատ կարևոր ծրագրի կենսագործման մանրամասները, որոնց շնորհիվ կառուցվել են երեք սենյականոց տներ՝ ցանկապատված տնամերձով և կից շինություններով, ֆինանսական օժանդակությամբ նպաստել է հողագործության և անասնապահության զարգացմանը, գյուղն ապահովվել է էլեկտրականությամբ, կոյուղու և խմելու ջրի համակարգերով: Վերաբնակիչներին աշխատանքով ապահովելու համար հիմնադրամը ստեղծել է 5 հա նռան այգի, իսկ միայն 2017 թ. գյուղում շահագործման է հանձնել վեց նոր բնակելի տուն: Հիմնադրամի ջանքերով տնտեսական այս ծրագրերի իրագործման շնորհիվ Առաջամուղ գյուղը 2008 թ. կազմավորվել էր իբրև առանձին համայնք՝ իր մեջ ներառելով Առաջամուղ և Արաքսավան բնակավայրերը:

Համապատասխան փաստերի վերլուծությամբ ցույց է տրված նաև Արցախի մյուս շրջաններում, հատկապես՝ Քաշաթաղի շրջանում, Քարվաճառում, Շուշիում, Կովսականում, Մարտակերտի ու Մարտունու շրջաններում, մայրաքաղաք Ստեփանակերտում իրականացրած լայնածավալ տնտեսական ծրագրերը, որոնց արդյունքում հնարավոր եղավ սոցիալական բազմաթիվ խնդիրների լուծումը, կրթամշակութային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավումը: Վերոհիշյալ ծրագրերից հեղինակը առանձնացնում է հարավային Քաշաթաղում 2005-2007 թթ. սկիզբ առած և շարունակվող «Այրաղաց» և «Տեխնիկական բազա» կոչվող տնտեսական ծրագրերը, որոնք խթան հանդիսացան հատկապես հացահատիկային արտադրության բնագավառի զարգացման համար:

* Հոդվածը ներկայացվել է 12.07.2021 թ., գրախոսվել՝ 25.07.2021 թ., ընդունվել տպագրության՝ 30.07.2021 թ.:

[1] Հետազոտությունն իրականացվել է ԱՀ կառավարության կողմից ֆինանսավորվող Արցախի գիտական կենտրոնում անցկացվող «Արցախ-Սփյուռք առնչությունները 20-րդ դարավերջին և 21-րդ դարի սկզբին» գիտական թեմայի շրջանակներում, ծածկագիր՝ scs19AA-0051:

Վերջում հեղինակը ցավ ու ափսոսանք է հայտնում, որ կատարված այս ծավալուն և արդյունավետ աշխատանքների արդյունքի մեծագույն մասը վերջին պատերազմի արդյունքում վայելում է մեր հարևան՝ կավթիչ ու ռևանշիստական ձգտումներ ունեցող Ադրբեջանը:

Արցախում տնտեսական ծրագրերի իրագործման մեջ մեծ ավանդ ունի «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը: Հիմնադրամը ստեղծվել է 1988 թ. Նյու-Յորքում՝ ամերիկահայ գործարար և բարերար Ջեյմս Թուֆենկյանի կողմից: Թուֆենկյանի նախնիներն Ամերիկա էին գաղթել Արևմտյան Հայաստանից: Ինքը՝ Ջեյմս Թուֆենկյանը, մեծացել էր մի նահանգում, որտեղ խորթ էին հայեցի դաստիարակությունն ու մտածելակերպը: «Հայկականը» նրա մեջ արթնացել էր Նյու Յորքում ուսանելու տարիներին, հայ ընկերների ու հայկական համայնքի հետ շփումներն իրենց դրոշմն են թողել նրա հետագա կենսագրության վրա: Ջ. Թուֆենկյանը մտերիմներին հաճախ էր կրկնում, որ գործերի հաջողության դեպքում հայրենիքում անպայման սեփական գործ կձեռնարկի: Նպատակ ունենալով բարեգործական ծրագրեր իրականացնել հայրենիքում՝ 1999 թ. Երևանում հիմնադրվեց «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակ, որի գործադիր տնօրենը Անդրանիկ Գասպարյանն էր, տարածաշրջանային տնօրենը՝ Մարի Մաթոսյանը:

Հիմնադրամի գլխավոր նպատակն է շենացնել և հզորացնել Հայրենիքը, հիմնական խնդիրներն են՝ աջակցել խոցելի և մեկուսացված ընտանիքներին, նպաստել քաղաքացիական հասարակության վերականգնմանը և մշակութային ու հոգևոր վերածննդին, իրականացնել բնապահպանական ծրագրեր, օժանդակել Արցախի Հանրապետությունում սոցիալ-տնտեսական ծրագրերի կենսագործմանը և սահմանամերձ շրջանների զարգացմանը: Հիմնադրամը ՀՀ-ում և Արցախում իրականացրել է 80-ից ավելի ծրագիր՝ աղքատության դեմ պայքարի, կրթության զարգացման, բնապահպանության և ազգային, քաղաքացիական, մշակութային արժեքներ արմատավորելու ուղղությամբ: Նրա ուշադրության կենտրոնում են եղել նաև պատմաճարտարապետական հուշարձանների պահպանումն ու վերականգնումը[1]:

Արցախի սոցիալ-տնտեսական զարգացմանը անմիջականորեն օգնելու նպատակով 2003 թ. բացվել է «Թուֆենկյան» հիմնադրամի Ստեփանակերտի գրասենյակը, որի միջոցով իրականացվել են ոչ միայն սոցիալական՝ առողջապահական, կրթամշակութային, այլև վերաբնակեցման, հատկապես՝ տնտեսական զարգացման ծրագրեր: Ինչպես նշել է հիմնադրամի՝ Ստեփանակերտի գրասենյակի տնօրեն Ա. Գասպարյանը. «Ի տարբերություն մյուսների՝ Արցախի գրասենյակի առաքելությունը մի փոքր այլ է, և այն ավելի շատ ունի ռազմավարական նշանակություն: Մեր նպատակը զուտ բարեգործությունը չէ, այլ Արցախի՝ մասնավորապես սահմանամերձ շրջանների վերաբնակեցումն ու բարգավաճումը: Դրա համար մեր մասնաճյուղի տարեկան բյուջեի մեծ մասը հատկացվում է վերաբնակեցման ծրագրերին: Մենք փորձում ենք հիմք դնել այնպիսի ծրագրերի, որոնք մարդկանց հնարավորություն կտան զարգացնել տնտեսությունը, դառնալ ինքնուրույն սեփականատեր: Իսկ որպեսզի նրանք ցանկություն ունենան մնալ գյուղում (այն էլ՝ սահմանամերձ), պետք է պայմաններ ստեղծել: Հիմնադրամի ծրագրերով նախատեսվում է ոչ միայն բնակելի տների շինարարություն, այլ նաև ենթակառուցվածքների ստեղծում՝ հոսանք, ճանապարհներ, խմելու և ոռոգման ջուր: Սահմանամերձ գյուղը մեր անվտանգության երաշխիքն է, և պետք է ժողովրդին ամրացնել այնտեղ: Լինելով սահմանամերձ շրջանում՝ ես որոշ բնակավայրերում տեսա ենթակառուցվածքների բացակայություն և աղքատություն: Մենք կփորձենք այնտեղ ապրելու նպաստավոր պայմաններ ստեղծել»[2]:

Հիմնադրամի տնօրեն Ջեյմս Թուֆենկյանի կարծիքով՝ «վերաբնակեցման խնդիրը ոչ միայն ԱՀ իշխանությունների, այլև սփյուռքի բարեգործական կազմակերպությունների, Արցախի ճակատագրով մտահոգ համայն հայության մտահոգություններից մեկը պետք է

[1] *Հայկական Սփյուռք, Տարեգիրք-2009, Երևան, 2010, էջ 134:*
[2] *«Ազատ Արցախ», 5 հուլիսի 2005:*

դառնա: Մեր կառույցը նպաստում է երկրում կրթամշակութային մի շարք ծրագրերի իրականացմանը, աջակցում տաղանդավոր երեխաների զարգացմանը՝ ցուցաբերելով բարոյական և նյութական օժանդակություն»[1]:

Այդ ուղղությամբ կատարած առաջին խոշոր քայլերից մեկը Հադրութի շրջանի նորակառույց Առաջամուղ գյուղի հովանավորչական ծրագիրն էր, որը համահունչ էր ԱՀ իշխանությունների վարած քաղաքականությանը: Նրա հիմքը դրվել էր 2001 թ. կեսերին: Առաջամուղը կառուցվել էր ԹԲՀ-ի հանգանակած միջոցներով: Հիմնադրամի աշխատակիցների խոսքերով. «Ծրագրի հեղինակները նախատեսել էին ամեն ինչ, որպեսզի բնակիչներն իրենց հնարավորինս լավ զգան (դրանք հիմնականում երեք սենյականոց տներ են՝ ցանկապատված տնամերձով և կից շինություններով), տներից յուրաքանչյուրի շինարարության համար նախատեսված է եղել 20 հազար ԱՄՆ դոլար: Առայսօր բարեգործական ծրագրերի իրականացման համար ուրիշ հովանավորներ հիմնադրամը չի փնտրել, բայց ծրագրերի ծավալը մեծացնելու և աշխատանքների ընթացքն արագացնելու համար հիմնադրամը համագործակցության է հրավիրել ուրիշ բարերարների: Օրինակ՝ Առաջամուղ գյուղի ծրագրի համար ֆինանսական միջոցներ է հատկացրել ամերիկահայ հայտնի բժիշկ Ալբերտ Կարամանուկյանը»[2]: «Առաջամուղի ծրագիրը, - Ա. Գասպարյանի խոսքերով, - երեք բաղկացուցիչ մաս ունի՝ բնակելի տների շինարարություն (ինչը ծրագրի ոչ թե վերջակետ, այլ հիմք պիտի լինի), ապրելու պայմանների և, որ ավելի դժվար է ու կենսական՝ աշխատատեղերի և վաստակելու հնարավորության ստեղծում: Ծրագրի առաջին երկու բաժնի իրականացումը 2005 թ. ավարտվել է: Հիմնադրամը մոտակա տարիներին կփորձի լուծում տալ ծրագրի երրորդ մասին. որևէ ձևով կօժանդակի հողագործության և անասնաբուծության զարգացմանը: Թերևս մի քիչ ռոմանտիզմի է նման, բայց չենք բացառում, որ Առաջամուղը օրինակ կհանդիսանա, և կգտնվեն բարերարներ, որոնք այլ գյուղերում նմանատիպ ծրագրեր իրականացնելու ցանկություն կհայտնեն», - ասել է Ա. Գասպարյանը[3]: Գյուղում կառուցված 19 տուն բնակեցված էր: Բնակիչների մի մասը փախստական էր Ադրբեջանից, մի մասն այնտեղ էր տեղափոխվել ՀՀ-ից, մյուս մասն էլ՝ Արցախի տարբեր բնակավայրերից, որոնց տները 1991-1994 թթ. պատերազմի տարիներին ավերվել էին[4]: Գյուղն ապահովված էր էլեկտրականությամբ, կոյուղով և խմելու ջրով: Կառուցվել էին գյուղապետարանի շենք և բուժկետ: Վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու համար ստեղծվել էր 5 հեկտար նռան այգի: 2017 թ. հիմնադրամը շահագործման էր հանձնել վեց նոր բնակելի տուն:

Առաջամուղ գյուղը 2008 թ. կազմավորվել էր՝ որպես առանձին համայնք՝ իր մեջ ներառելով Առաջամուղ և Արաքսավան բնակավայրերը: Արաքսավան գյուղը հիմնադրվել էր 2014 թ.: Առաջամուղ համայնքի կազմում ընդգրկվելը նոր հեռանկարներ էր բացել նրա զարգացման համար: Հովիտը ձգվում է մոտ 110 կմ՝ ներառելով Քաշաթաղի ու Հադրութի շրջանների հարավային մասերը: Արաքսավան բնակավայրի ռազմավարական նշանակության ծրագրերն Արցախի կառավարության կողմից սկսեցին իրականացվել 2012 թ.: Բնակավայր եկած մարդկանց բնակեցնելու նպատակով կառուցվել էր 35 ժամանակավոր կացարան: Կառուցվել էին 30 կմ երկարության, 10 կՎատ բարձր լարման հզորության էլեկտրական գծեր, վերանորոգվել էին 40 կմ ջրանցքներ, մելիորատիվ աշխատանքներ իրականացնելու նպատակով մաքրվել էին 1000 հեկտարից ավելի վարելահողեր, ինչը հնարավորություն է տալիս մենատնտեսներին զբաղվելու ինչպես բանջարանոցային, այնպես էլ հացահատիկային մշակաբույսերի աճեցմամբ[5]: Մենատնտեսներին հնարավորություն էր տրվել նաև զբաղվելու այգեգործությամբ ու անասնապահությամբ:

---

[1] *«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 5 սեպտեմբերի 2007:*
[2] *«Ավատ Արցախ», 5 հուլիսի 2005:*
[3] *Նույն տեղում:*
[4] *«Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 5 սեպտեմբերի 2007:*
[5] *«Ավատ Արցախ», 11 հունիսի 2016:*

Որպես ծրագրի նշանակետ՝ հիմնադրամն ընտրել էր նաև Քաշաթաղի շրջանի հարավային թևը, որտեղ, Ստեփանակերտի գրասենյակի տնօրենի դիտարկումներով, մարդիկ վատ են ապրել. «Գյուղեր կան՝ առանց հոսանքի, ջրի ու ճանապարհների, մինչդեռ ժողովրդին պետք է ամրապնդել այնտեղ: 2004 թ. այդ շրջանի Այգեհովիտ գյուղում հիմնադրամի հովանավորությամբ կառուցվել էր ալրաղաց, որն սպասարկում էր շրջակա 20 գյուղերի բնակիչների: Հիմնադրամի ջանքերով շրջանում վերականգնվել էին 10 հա խաղողի այգիներ, որտեղ աշխատում էր 20-25 մարդ, աշխատավարձը նորմատիվային էր և տատանվում էր 45-70 հազար դրամի միջև: Հիմնադրամի նպատակը աշխատատեղերի ստեղծումով ժողովրդին այդ տարածքներում ամրապնդելն էր: Աշխատանքներ են տարվել նաև շրջանի Իշխանաձոր գյուղում բուժամբուլատորիայի կառուցման ուղղությամբ: Այդ շինարարությունը նախատեսված էր ավարտել 2005 թ. հոկտեմբերին: Այն կարող էր սպասարկել 2000 բնակչի: Այդ շրջանում հիմնադրամը իրականացրել է նաև մայրուղիները համայնքներին միացնող ճանապարհների խճապատման աշխատանքներ»[1]:

Արցախի Հանրապետության իշխանությունների և «Թուֆենկյան» հիմնադրամի այս ծրագիրն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, որի նպատակն էր տնտեսական ծրագրերի իրականացմամբ ամրապնդել հանրապետության հարավային սահմանը: Սակայն նման ծրագրերը անհնարին էր իրականացնել միայն Արցախի պետական բյուջեի միջոցներով: Անհրաժեշտ էր ինչպես ՀՀ, այնպես էլ Սփյուռքի մեր հայրենակիցների աջակցությունը:

Արցախի տնտեսական զարգացման բաղկացուցիչ մասը կազմող վերաբնակեցման ծրագրի շրջանակներում 2008 թվականից ԹԲՀ-ի կողմից իրագործվել էր Քաշաթաղի շրջանի վերաբնակիչների տների վերանորոգման համար շինանյութի տրամադրման և դրանց նպատակային օգտագործման վերահսկման ծրագիրը: 2008-2013 թթ. Քաշաթաղի շրջանի 7 համայնքների 47 ընտանիքներին տրամադրվել են համապատասխան շինանյութեր[2]: Հերիկ և Հակ համայնքներում հիմնադրամի կողմից տուն էր տրամադրվել երկու վերաբնակիչ ընտանիքների[3]: Երկու տուն տրվել էր «Արցախի վիրավոր զինծառայողներին բնակարանային հարմարավետ պայմաններով ապահովելու» ծրագրի շրջանակներում: Հիմնանորոգվել էր Աղավնատուն համայնքում ապրող բազմազավակ ընտանիքին հատկացված տունը[4]: Առանց զարգացած ենթակառուցվածքների ու վերաբնակիչների համար տարրական կենսապայմանների ստեղծման հնարավոր չէր պահել գյուղը: Բնակիչների կենսապայմանները բավարարելու համար ԹԲՀ-ն, համագործակցելով ԱՀ կառավարության հետ, Արցախի տնտեսական զարգացման մի շարք ծրագրերի իրագործման արդյունքում տարբեր գյուղերում կառուցել էր խմելու ջրագծեր՝ գյուղացիներին ապահովելով մշտական ջրով: Հիմնադրամի ֆինանսավորմամբ վերանորոգվել էր Քաշաթաղի շրջանի Քարեգահ և Այգեհովիտ գյուղերի գյուղամիջյան ճանապարհը[5]: Թուֆենկյան հիմնադրամի ջանքերով հետևողականորեն վարելով վերաբնակեցման լուրջ քաղաքականություն և իրականացնելով տնտեսական զարգացման տարբեր ծրագրեր, օգտագործելով Քաշաթաղի շրջանի տնտեսական ներուժն ու հնարավորությունը՝ հնարավոր եղավ զարգացնել շրջանի գյուղատնտեսությունն ու էներգետիկ ոլորտը: Հիմնադրամի ներդրումների շնորհիվ զարգացավ շրջանի անասնապահությունը, ընդարձակ վարելահողերի մշակման արդյունքում ապահովվեց գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների բարձր բերքատվությունը, կատարելագործվեց ոռոգման համակարգը, լավ հնարավորություններ ստեղծվեցին հիդրո-

---

[1] *«Ազատ Արցախ», 5 հուլիսի 2005:*

[2] *Վարդանյան Ա., «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի (ԹԲՀ) գործունեությունը Արցախում, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, Բ (գիտական հոդվածների ժողովածու), Երևան, 2013, էջ 78:*

[3] *«Ազատ Արցախ», 4 հոկտեմբերի 2018:*

[4] *«Մերան» ԼՂՀ Քաշաթաղի շրջանային թերթ, թիվ 20 (141), հոկտեմբեր, 2015:*

[5] *ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, ց. 1, կ-11, պ. մ. 50, թ. 12, 51:*

էներգետիկ բնագավառի զարգացման համար, մասնավորապես՝ Հագարի գետի ավազանում ձկնաբուծության խթանման համար[1]: Հիմնադրամի անմիջական օժանդակությամբ և առաջարկով հաջողվեց Լիբանանի մի շարք հայ ձեռներեցների ընդգրկել Քաշաթաղի հարավային շրջանում վառելիքի սպասարկման ծրագրի մեջ, որի միջոցով 2010 թ. բացվել էր միակ բենզալցակայանը Քաշաթաղի տարածքում[2]:

Սիրիայում ընթացող պատերազմի հետևանքով մեծ կորուստներ կրեցին մեր հայրենակիցները, որոնցից շատերն ստիպված էին հեռանալ երկրից՝ ապաստան փնտրելով Մայր Հայրենիքում: Սիրիահայերի մի քանի ընտանիք հաստատվեց ԱՀ Կովսական քաղաքում: 2011 թ. հիմնադրամը ԱՀ կառավարության հետ համատեղ վերանորոգեց Կովսականի բազմաբնակարան մի շենք և 7 բնակարան տրամադրեց Սիրիայից տեղափոխված մեր հայրենակիցներին[3]: ԹԲՀ-ը սիրիահայերի համար շահագործման էր հանձնել մի քանի տներ Գետամեջ և Վան գյուղերում, վերանորոգվել էին Իշխանաձոր գյուղում հաստատված սիրիահայ և լիբանանահայ ընտանիքների բնակարանները: Բերձորում, Իշխանաձորում և Կովսականում հաստատված հողագործ սիրիահայերին ԱՀ կառավարության կողմից տրամադրվում էին վարկեր:

Հիմնադրամն աշխատանքներ է տարել վերաբնակեցված գյուղերի տնտեսության ամրապնդման և զարգացման ուղղությամբ: Նրա կողմից իրականացվել էր խաղողի այգիների վերականգնման ծրագիր Հարավային Քաշաթաղի Այգեհովիտ և Ուռեկան գյուղերում: Այգիները վերականգնելուց և ծախսերը փակելուց հետո, ըստ կազմված պայմանագրի, դրանք վերադարձվելու էին համայնքի անդամներին: Այգիներում աշխատող գյուղացիները ստանում էին աշխատավարձ: Հիմնադրամի միջոցներով Քաշաթաղի Այգեհովիտ գյուղում, ինչպես արդեն նշել ենք, կառուցվել էր ալրաղաց, որն սպասարկում էր շրջակա մոտ 20 գյուղերի բնակիչների[4]: Հարավային Քաշաթաղում շարունակվում էին 2005 ու 2007 թթ. սկիզբ առած «Ալրաղաց» և «Տեխնիկական բազա» տնտեսական ծրագրերը, որոնք խթան հանդիսացան հացահատիկային արտադրության բնագավառի զարգացման համար[5]:

Հադրութի շրջանի Առաջամուղ գյուղի վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու նպատակով ԹԲՀ-ի տրամադրած ֆինանսական աջակցությամբ 2005 թ. ստեղծվել էր 5 հա նռան այգի: 2018 թ. այգիներից ստացվել էր 18 տոննա նուռ[6]: Երիցվանք գյուղի վերաբնակիչներին աշխատատեղերով ապահովելու նպատակով ԹԲՀ-ի ֆինանսական օգնությամբ 2013 թ. հիմնվել էր 7 հեկտար նռան այգի, կառուցվել ջերմոցային երկու տնտեսություն՝ յուրաքանչյուրը 240 մ^2 մակերեսով[7]: Նույն շրջանի Վան գյուղի բնակչության հիմնական զբաղմունքը հողագործություն էր: Մեծ մասը զբաղվում էր ձմերուկի մշակությամբ: ԹԲՀ-ի միջոցներով համայնքում 2018 թ. գարնանը հիմնվել էր 5 հա արքայանարնջի այգի, տնկվել շուրջ 2500 տնկի[8]: Շրջանի Մոշաթաղ և հարևան Ծիծեռնավանք գյուղական համայնքի Տանձուտ գյուղերում չորս բազմազավակ ընտանիքի հատկացվել էր ընդհանուր 18 մեղվաընտանիք[9]: Հիմնադրամը վերաբնակիչներին տրամադրում էր նաև ցածր տոկոսադրույքով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարները ետ ստանալով՝ օգտագործվել էին բնակչության հետագա սոցիալական ծրագրերի իրագործման համար:

Քաշաթաղի շրջանում հիմնադրամն իրականացնում էր նաև առողջապահական ծրագրեր: 2005 թ. Իշխանաձոր գյուղում, ինչպես արդեն նշել ենք, կառուցվել էր բժշկական

---

[1] *«Ազատ Արցախ», 29 մարտի 2008:*
[2] *Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2010, Եր., 2011, էջ 125:*
[3] *Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:*
[4] *«Ազատ Արցախ», 5 հուլիսի 2005:*
[5] *Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2009, էջ 135:*
[6] *Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:*
[7] *Նյութը տրամադրել է Ստեփանակերտի «Թուֆենկյան» հիմնադրամի գրասենյակը:*
[8] *«Ազատ Արցախ», 6 հոկտեմբերի 2018:*
[9] *«Ազատ Արցախ», 8 օգոստոսի 2018:*

համալիր, որը կարող էր սպասարկել 2000 բնակչի[1]: Բուժհամալիրը կահավորված էր, ուներ իր բաժանմունքները՝ ատամնաբուժական, մանկաբարձական, բուժքույրական անձնակազմով, «շտապ օգնության» մեքենայով: Հիմնադրամի նախաձեռնությամբ համալիրի աշխատակիցները դասընթացների էին մասնակցել Ստեփանակերտի ծննդատանը և ախտորոշիչ կենտրոնում[2]: 2009 թ. Քաշաթաղի հյուսիսային և հարավային բուժկետերին, հիվանդանոցներին, Առողջապահության նախարարությանը ԹԲՀ-ի կողմից տրամադրվել են «Վարդանանց ասպետներ» և IMEC կազմակերպություններից ստացված բժշկական պարագաներ, սարքավորումներ, կահույք: Նույն թվականին հիմնադրամի հովանավորությամբ բուժկետ էր բացվել Հյուսիսային Քաշաթաղի Մշենի գյուղում[3]: Հիմնադրամի կողմից կառուցվել էին Աղավնատուն համայնքի, հիմնանորոգվել և կահավորվել՝ Մոշաթաղի բուժկետերը: 2015 թ. հիմնադրամի մասնակցությամբ Քաշաթաղի շրջանում իրականացված բարեգործություններից էր Խաչգետիկ գյուղում կառուցված բուժկետը: Սա իրականություն դարձավ «Թուֆենկյան» հիմնադրամի, Երևանում գործող «One Armenia» կազմակերպության և Լոնդոնում գործող «Հայկական կենտրոն տրեստ» կառույցի միջոցով[4]:

«Թուֆենկյան» հիմնադրամի ԱՀ գրասենյակը մշակել էր և իրագործել մի ծրագիր, համաձայն որի՝ շինանյութեր էին տրամադրվել գյուղացիներին՝ իրենց տները վերանորոգելու համար: Հիմնադրամը վերանորոգել էր ավելի քան 30 տուն, նախակրթական դպրոց Հակ, Խոջանց և Գետափ գյուղերում: Այդ գյուղերում բնակիչների կենսապայմանները բավարարելու համար հիմնադրամը, համագործակցելով ԱՀ կառավարության հետ, կառուցել էր խմելու ջրագծեր՝ գյուղացիներին ապահովելով մշտական ջրով[5]:

ԱՀ կառավարության հետ համատեղ խմելու ջրագիծ կառուցվեց Քարոտան, Վարդաբաց և Կումայրի գյուղերում: Գյուղերի տնտեսական վերելքը խթանելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը տրամադրել էր ցածր տոկոսադրույքով վարկեր: Վարկերի համար տրամադրված գումարը ետ ստանալով՝ այն օգտագործվում էր հետագա ծրագրերի ընդլայնման համար:

Սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման շրջանակներում ԱՀ առողջապահության նախարարության հետ համագործակցելով՝ ԹԲՀ-ն կազմակերպել էր շարժական կլինիկայի ուղևորություններ Քաշաթաղի հարավային բոլոր գյուղերը, անցկացրել հետազոտություններ: Անվճար տրվել էր դեղորայք: Ծրագիրը շարունակվել էր ավելի մեծ ծավալով՝ ընդգրկելով ամբողջ Քաշաթաղը և Քարվաճառը: Առողջապահության նախարարությունը տրամադրել է դիագնոստիկայի բեռնատար[6]: Կազմակերպվել էին նաև «Birthlink» մանկաբարձների որակավորման դասընթացներ Քաշաթաղի շրջանի բոլոր համայնքների բուժքույրերի համար:

ԹԲՀ-ն կազմակերպել էր շարժական կլինիկայի ուղևորություններ նաև Շահումյանի շրջանում: 2010 թ. սեպտեմբերին Քարվաճառ էին այցելել տարբեր բժշկական մասնագետներից կազմված խմբեր, ովքեր իրենց հետ բերել էին համապատասխան բժշկական սարքավորումներ: Տեղի բնակչությունն ուներ նմանատիպ միջոցառումների կարիք և գոհ էր, որ կարողանում էր հետազոտվել շրջանում և ստիպված չէր լինում բժշկական հետազոտման և ախտորոշում ստանալու համար մեկնել Ստեփանակերտ, Մարտակերտ կամ ՀՀ Վարդենիս քաղաք: Այս ծրագրերը զգալիորեն թեթևացնում էին բնակիչների այդ հոգսերը[7]:

---

[1] *ԱՀ պետական արխիվ, ֆ. 180, գ. 1, կ-11, պ. մ. 50, թ. 37, 71:*

[2] *Մինասյան Է., Վարդանյան Ա., Հայրենիք-Սփյուռք առնչությունները ՀՀ անկախության տարիներին (1991-2009 թթ.), հոդվածների ժողովածու, Ստեփանակերտ, 2010, էջ 95:*

[3] *Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2009, էջ 135:*

[4] *Մերան, թիվ 20 (141), հոկտեմբեր 2015:*

[5] *Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2010, էջ 124-125:*

[6] *Նույն տեղում, էջ 124:*

[7] *«Նոր Շահումյան», ԼՂՀ Շահումյանի շրջվարչակազմի պաշտոնաթերթ, թիվ 17 (88), 1-15 սեպտեմբեր, 2010:*

Սոցիալ-տնտեսական ծրագրերի իրականացման ոլորտում հատկապես կարևորվում էին կրթամշակութային ծրագրերը: Ահա թե ինչու «Թուֆենկյան» հիմնադրամի՝ Արցախի գրասենյակի միջոցով իրագործվում էին նաև լայնամասշտաբ կրթամշակութային ծրագրեր: 2007 թ. ամռանը Առաջամուղ գյուղում շահագործման հանձնվեց 80 տեղանոց դպրոցը, որի շինարարության և կահավորման ծախսերը հոգացել էին «Թուֆենկյան» և Հայ կրթական հիմնադրամները[1]: 2017 թ. հիմնադրամի կողմից ընդլայնվել էր գյուղի դպրոցի շենքը՝ ավելացել էր չորս նոր դասասենյակ: Հիմնադրամի ֆինանսավորմամբ նորոգվել էր Քաշաթաղի շրջանի Աղավնատուն համայնքի դպրոցի շենքը, վերանորոգվել Հռչանց և Գետափ գյուղերի դպրոցները: Հակ գյուղի դպրոցը վերանորոգվել էր ԱՄՆ-ում գործող «Հայրենասեր» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ:

Հաշվի առնելով երեխաների նախադպրոցական կրթության կարևորությունը՝ ԹԲՀ Ստեփանակերտի գրասենյակը մեծ ուշադրություն էր դարձնում մանկապարտեզների շինարարությանը: 2013 թ. ամռանն ավարտվեց Քաշաթաղի շրջանի հյուսիսային մասի ամենամեծ համայնքներից մեկի՝ Մոշաթաղի 25 երեխաների համար նախատեսված մանկապարտեզի կապիտալ վերանորոգումը: Մանկապարտեզ կառուցվեց Առաջամուղ գյուղում: Մանկապարտեզների բացումը նպաստում է երեխաների նախադպրոցական կրթությանն ու հայեցի դաստիարակությանը, տեղերում բնակչության համար աշխատատեղերի ստեղծմանը:

Վերոհիշյալ ծրագրերի շրջանակներում «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից Քաշաթաղի շրջանի բոլոր գյուղերում ուսուցիչների, աշակերտների և գյուղի երիտասարդության համար երկու փուլով անց էին կացվել համակարգչային դասընթացներ: Շահումյանի շրջանի համայնքներում համակարգչային գրագիտությունը զարգացնելու նպատակով «Թուֆենկյան» հիմնադրամը, նվիրելով վեց նոթբուք և ինը համակարգչային բլոկ, երկու տարի շարունակ ֆինանսավորել է դասընթացները[2]:

Անհրաժեշտ է նշել, որ հիմնադրամը ֆինանսական ներդրումներ է կատարել Շուշիում: Հիմնադրամը Շուշիի պատմաերկրագիտական թանգարանի հովանավորն էր: Նրա միջոցներով վերանորոգվել է թանգարանը, ձեռք են բերվել նոր ցուցանմուշներ և կահույք: 2005 թ. մայիսի 9-ին այստեղ բացվեց նոր բաժին՝ նվիրված Շուշիի ազատագրման ռազմագործողությանը: Նոր բաժինը հովանավորվել էր ի հիշատակ ազգային-հասարակական գործիչ, բոստոնահայ Վահե Մարուխյանի՝ նրա ընտանիքի կողմից: 2004 թ. սկսած՝ ԹԲՀ-ի կողմից իրականացվում էր «Տաղանդավոր երիտասարդներին ֆինանսական աջակցություն» ծրագիրը: Այն նախատեսված էր օժանդակելու ԱՀ շնորհաշատ երեխաներին և երիտասարդներին՝ հետագայում նրանց տաղանդը բացահայտելու և զարգացնելու համար: Տաղանդավոր երիտասարդների ընտրության հարցում հիմնադրամը համագործակցում էր ԱՀ մշակույթի, կրթության և գիտության նախարարությունների, ինչպես նաև Սպորտի կոմիտեի հետ: Ծրագրում ընդգրկված էին երեխաներ Ստեփանակերտից, Մարտունու, Հադրութի և Մարտակերտի շրջաններից: ԹԲՀ-ի օժանդակությամբ իրագործվել էր Շուշիի երեք երգչախմբերի լազերային սկավառակի ձայնագրությունը, որը մեծ ընդունելության էր արժանացել արտասահմանում[3]: Հիմնադրամը մեծ ուշադրություն էր դարձնում Քաշաթաղի հայկական հուշարձանների պահպանմանը: Նրա ֆինանսական աջակցությամբ 2009 թ. վերանորոգվել էր 17-րդ դարի Սբ. Մինաս եկեղեցին Հակ գյուղում, 2010-ին՝ 17-րդ դարի Միրիկ եկեղեցու տանիքը[4]:

Բարձր գնահատելով «Թուֆենկյան» հիմնադրամի սոցիալ-տնտեսական ծրագրերի կենսագործման ուղղությամբ բազմաբնույթ գործունեությունը Քաշաթաղի շրջանում, ինչ-

---

[1] *«Լուսարար», 16 օգոստոսի, 2007:*

[2] *«Նոր Շահումյան», թիվ 6 (149), 16-31 մարտի, 2013:*

[3] *«Ակատ Արցախ», 5 հուլիսի 2005:*

[4] *Հայկական Սփյուռք. Տարեգիրք-2010, էջ 125:*

պես նաև զանազան կազմակերպությունների և հիմնադրամների ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը՝ ԱՀ նախագահ Բակո Սահակյանը նշել է. «Հավատացած եմ, որ համատեղ ուժերով մենք կշենացնենք Արցախի այս գողտրիկ հատվածը, որն ունի համահայկական նշանակություն: Առանց Քաշաթաղի շրջանի հնարավոր չէ Լեռնային Ղարաբաղի՝ որպես անկախ պետության լիարժեք զարգացումը և անվտանգ գոյատևումը: Սա պետք է հիշենք բոլորս և սրանով առաջնորդվենք մեր բոլոր ձեռնարկներում»[1]:

Քաշաթաղի շրջանի անապահով ընտանիքներին օգնում էին նաև Արցախում, ՀՀ-ում և Սփյուռքում գործող բարեգործական հիմնադրամները՝ «Գուրգեն Մելիքյանը՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին», Լիբանանում գործող «Արցախ Ֆոնդ»-ը, «ԱՐԻ» ծրագիրը, «Թուֆենկյան»-ը, «Քաշաթաղ»-ը, «Դիակոնիա»-ն, «ԱԳԱՊԵ»-ն և այլն: 2018 թ. «Հայրենասեր»-ի կողմից Մուշ գյուղում կառուցվեց նոր դպրոցական շենք, որը ծառայում է նաև հարևան Ալաշկերտ համայնքի դպրոցականներին: Դպրոցը կոչվում էր 2016 թ. ապրիլի 2-ին հերոսաբար մարտիրոսված Հայոց բանակի սպա Արմենակ Ուրֆանյանի անունով: 2017 թ., «Թուֆենկյան» հիմնադրամի ֆինանսավորմամբ, «Հայրենասեր» կազմակերպությունը Հակ գյուղում հիմնանորոգեց դպրոցի շենքը[2]:

Քաշաթաղի շրջանի հարավում գտնվող Իշխանաձոր գյուղում 2016-2017 թթ., Արցախի Հանրապետության կառավարության օժանդակությամբ, «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ և «Թուֆենկյան» հիմնադրամի աջակցությամբ, կառուցվել էր 1 ութբնակարանոց շենք, 22 բնակելի առանձնատուն: Գյուղի կայացման համար իրենց ներդրումն էին ունեցել նաև բարեգործական կազմակերպությունները: «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամը և «Հայրենասեր» հասարակական կազմակերպությունը նույնպես նպաստել էին բնակարանաշինությանը և այլ տնտեսական ծրագրերի իրականացմանը[3]:

«Թուֆենկյան» հիմնադրամը 2018-2019 թթ. տնտեսական զարգացման նոր ծրագրեր է իրականացրել Քաշաթաղի շրջանի արաքսամերձ Միջնավան քաղաքում և Ալաշկերտ գյուղում:

2018 թ. սեպտեմբերի 24-ին «Թուֆենկյան»-ն իր տնտեսական ծրագրերի շրջանակներում հերթական բարեգործությունն իրականացրեց Բերձոր քաղաքում՝ բնակելի տուն նվիրելով սիրիահայ Ցեզար Թաթլեյան և մարտակերտցի Լուսինե Առուշանյան ընտանիքին: Միջոցառմանը ներկա էին «Թուֆենկյան» հիմնադրամի գործադիր տնօրեն Ռաֆֆի Դուդակյանը, Արցախի ծրագրերի կառավարիչ Էդվին Գրիգորյանը, հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներ, համակիրներ, օժանդակողներ, Քաշաթաղի շրջվարչակազմի ղեկավարի օգնական Ստեփան Սարգսյանը, աշխատակազմի ղեկավար Դավիթ Դավթյանը, քաղաքաշինության և ճարտարապետության բաժնի վարիչ Հովհաննես Հակոբյանը: Ռաֆֆի Դուդակյանը տեղեկացրեց, որ 2018 թ. ընթացքում Արցախում վիրավոր զինծառայողներին բնակարանային հարմարավետ պայմաններով ապահովելու ծրագրի շրջանակներում շահագործման է հանձնվել 5 տուն, իսկ «Արցախ Ֆոնդ» կազմակերպության ԱՄՆ մասնաճյուղի համաֆինանսավորմամբ էլ 6 տուն հանձնվել էր Առաջամուղում: Եվս 2 տուն հանձնվել էր զոհված զինվորականի ընտանիքի Քաշաթաղի շրջանի Գետամեջ և Վան գյուղերում[4]:

2017 թ. Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղի նորակառույց Ազատամարտիկների թաղամասում կառուցվել էր 11 բնակելի տուն՝ ԱՀ կառավարության և «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի միջոցներով: 2 բնակելի տուն կառուցվել էր «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից: Բազմազավակ 2 ընտանիքի համար բնակելի տուն էր կառուցվել ԱՀ կառավարության կողմից: «Թուֆենկյան» հիմնադրամի աջակցությամբ և «Հայրենասեր» ՀԿ-ի

[1] *«Ազատ Արցախ», 29 մարտի 2008:*
[2] *«Մերան», 2018 թ., թիվ 1-2, էջ 2:*
[3] *«Մերան», 2018 թ., թիվ 3-4, էջ 5:*
[4] *«Մերան», 2018 թ., թիվ 18, էջ 3:*

հովանավորությամբ նոր թաղամասում կառուցվեց մարզադաշտ, որը կրում էր 2016 թ. ապրիլի սկզբին հերոսաբար նահատակված Անդրանիկ Զոհրաբյանի անունը: Հիմնադրամի ֆինանսական օգնությամբ 2017 թ. աշնանից սկսած՝ համայնքի տարածքում կառուցվեց ևս 60 առանձնատուն ԱՀ կառավարության և «Քաշաթաղ» ԲՀ-ի միջոցներով[1]:

2017 թ. կեսերից Քաշաթաղի հարավային արաքսամերձ Միջնավան քաղաքում կառուցվել էր ութսենյականոց բնակելի միհարկանի շենք և հիմնանորոգվել քաղաքապետարանի շենքը: Բազմաբնակարան շենքի կառուցումը և քաղաքապետարանի հիմնանորոգումն իրականացվել էր ոչ միայն «Թուֆենկյան» հիմնադրամի, այլև «Քաշաթաղ» բարեգործական հիմնադրամի ֆինանսավորմամբ և ԱՀ կառավարութան օժանդակությամբ[2]:

Քաշաթաղի շրջանում «Թուֆենկյան» հիմնադրամի իրագործած տնտեսական ծրագրերին զուգահեռ՝ շրջկենտրոն Բերձորում և մոտակայքում մոտ 20 պուրակ ու այգի էր հիմնվել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի նախկին դեկան, Արցախյան շարժման առաջամարտիկ, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամի նախագահ Գուրգեն Մելիքյանի կողմից և օժանդակությամբ: Շրջանի կազմավորման առաջին օրվանից բարերարն սկսել էր տարբեր բնագավառներում օժանդակել քաշաթաղցիներին՝ բազմազավակ ընտանիքներին տրամադրելով խոշոր եղջերավոր անասուններ, և դրան զուգահեռ իրականացնում էր ծառատունկ[3]:

Քաշաթաղի շրջանում 2018 թ. «Թուֆենկյան» հիմնադրամի կողմից տնտեսական ծրագրերի իրականացման շրջանակներում նորոգվել էին 17-րդ դարում կառուցված մի շարք եկեղեցիներ՝ Հակի Սուրբ Մինասը, Միրիկի Սուրբ Աստվածածինը, Հոչանցի Սուրբ Ստեփանոսը: Շրջանի կայացման ու զարգացման գործում, բացի պետական հատկացումներից, կարևորվում էին Սփյուռքում և ներսում գործող բարեգործական կառույցները, որոնցից էին «Թուֆենկյան»-ը, «Հայրենասերը»-ը, «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքներին» հիմնադրամը, որը, բացի սոցիալ-տնտեսական ծրագրեր իրականացնելուց, յուրաքանչյուր տարի 2-3 անգամ ծառատունկ էր կազմակերպում Բերձորում և հարակից տարածքներում: Հետևելով «Թուֆենկյան» հիմնադրամի տնտեսական գործունեությանը Արցախում՝ Լիբանանում գործող «ԱՐԻ» հիմնադրամի ֆինանսավորմամբ ու ԱՀ կառավարության օժանդակությամբ Աղավնո գյուղում կառուցվել էր 50 բնակելի առանձնատուն, ծրագիրը շարունակական էր[4]:

2018 թ. հուլիսից «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամի կողմից վերանորոգվել էր Մոշաթաղի համայնքապետարանի շենքը: Հիմնադրամը հիմնանորոգել էր Հոչանց գյուղի 17-րդ դարի Սուրբ Ստեփանոս եկեղեցին: 2018 թ. բնակարանային պայմանները բարելավելու ծրագրով Քաշաթաղի շրջանի 70 ընտանիքի հատկացվել էր մեծ քանակի շինանյութ[5]: 2018 թ. «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն ստանձնել էր Քաշաթաղի Հոչանց գյուղի Սուրբ Ստեփանոս եկեղեցու հիմնանորոգումը և տարածքի բարեկարգումը: Ընթացքում հողի տակից գտնվել էին 10-ից ավելի տապանաքարեր, խաչքարի բեկորներ: Հիմնանորոգման ընթացքում եկեղեցին ստացավ իր նախկին տեսքը: 2019 թ. հունիսի 23-ին Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգև արքեպս. Մարտիրոսյանի ձեռամբ կատարվեց Հոչանցի Սբ. Ստեփանոս եկեղեցու վերաօծման ծեսը[6]:

2020 թ. գարնանը Մայքլ և Սյուզան Կյոզայյանների՝ Բոսթոնի տանը տեղի ունեցած հավաքույթի նպատակն էր «Թուֆենկյան» հիմնադրամի աշխատանքներին ծանոթանալն

[1] «Մերան», 2018 թ., թիվ 6, էջ 2:
[2] Նույն տեղում, էջ 3:
[3] «Մերան», 2018 թ., թիվ 5, էջ 1:
[4] «Մերան», 2018 թ., թիվ 23-24, էջ3:
[5] Նույն տեղում, էջ 2:
[6] «Մերան», 2019 թ., թիվ 12, էջ 1:

ու աջակցելը: Այս նպատակով եղան բազմաթիվ նվիրատվություններ, ֆինանսական աջակցություն, որը, Ջեյմս Թուֆենկյանի առաջարկով, հատկացվեց Քաշաթաղի Վան համայնքի դպրոցի վերանորոգման համար[1]:

Այսպիսով՝ «Թուֆենկյան» բարեգործական հիմնադրամն իր հայրենանվեր գործունեությամբ, սոցիալ-տնտեսական բազում ծրագրերի իրագործմամբ նպաստում էր Արցախի տնտեսական զարգացմանը: «Սփյուռքի հայությունը կապրի Հայաստանի սիրով ու կապրի անոր ապագայի համար, - ասել է Ալեք Մանուկյանը, - այլապես ինչ իմաստ պիտի ունենար մեր ազգապահպանումի ամբողջ պայքարը, եթե մենք չունենայինք վախճանական նպատակ մը: Մենք համոզված ենք, թե առանց հայրենիքի չի կարող գոյատևել սփյուռքը»[2]:

Ցավով ու ափսոսանքով պետք է արձանագրենք մի իրողություն, որ հիմնադրամի աջակցությամբ և անմիջական մասնակցությամբ իրականացված տնտեսական զարգացման արցախյան մեծածավալ այս ծրագրերի արդյունքների մեծագույն մասն այսօր վայելում է մեր հարևան՝ ագրեսոր ու զավթիչ պետությունը՝ Ադրբեջանը, որը, չբավարարվելով Արցախի Հանրապետության մեծագույն մասի նվաճումով, ռևանշիստական մեծ ձգտումներ է ցուցաբերում նաև ՀՀ տարածքների նկատմամբ:

Эдик Минасян, ДЕЯТЕЛЬНОСТЬ ФОНДА "ТУФЕНКЯН" ПО РЕАЛИЗАЦИИ ПРОГРАММ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ В КОНЦЕ XX И В ДВУХ ДЕСЯТИЛЕТИЯХ XXI ВЕКА. В статье исследуется масштабная работа, проделанная Благотворительным фондом Туфенкян в области разработки и реализации программ, направленных на развитие экономики Арцаха. Помимо инвестиций в экономику Арцаха, фонд реализовал программы, которые позволили людям развивать свою экономику, становиться собственниками, оставаться в приграничных селах, создавать безопасные и комфортные условия для переселения, расширять жилье, создавать инфраструктуру: электричество, дороги, питьевая вода, поливная вода, преодоление бедности и т. д.

Пример реализации спонсорской программы новопостроенного села Араджамух в Гадрутском районе раскрывает детали реализации очень важной программы экономического развития Фондом Туфенкяна, благодаря которой были построены трехкомнатные дома с огороженной территорией. Отдельно стоит отметить финансовую поддержку развития сельского хозяйства и животноводства: системы электроснабжения, канализации и питьевого водоснабжения. Чтобы обеспечить жителей рабочими местами, фонд создал гранатовый сад площадью 5 га, и только в 2017 г. в поселке было сдано шесть новых домов. Благодаря реализации этих экономических программ усилиями Фонда в 2008 г. село Араджамух была образована отдельная община, в которую вошли поселки Араджаван и Араксаван.

Анализ соответствующих фактов показывает масштабные экономические программы, реализованные в других регионах Арцаха, особенно в Кашатагском, Карвачарском (Шаумянском), Шушинском, Мартакертском и Мартунинском районах, в столице Степанакерте, в результате чего многие социальные проблемы были решены, улучшены образовательные, культурные и социальные условия. Из вышеперечисленных программ автор выделяет экономические программы «Мукомольный завод» и «Техническая база», запущенные на юге Кашатага в 2005-2007 гг. Эти программы стали стимулом для развития зернового производства.

В конце, автор выражает боль и сожаление по поводу того, что большинство результатов этой обширной и эффективной работы пользуется наш сосед, Азербайджан, который имеет большие оккупационные и агрессивные устремления.

---

[1] *«Մերան», 2020 թ., թիվ 23-24, էջ 5:*

[2] *Համպասպյան Վ., Ալեք Մանուկյան, Եր., 1994, էջ 24; տե՛ս նաև Մինասյան Է., Վարդանյան Ա., նշվ. աշխ., էջ 67-68:*

Ключевые слова: фонд, экономические программы, Арцах, Благотворительный фонд «Туфенкян», офис в Степанакерте, финансовые ресурсы, сельское хозяйство, животноводство, жилье, мелиоративные работы, каналы, линии электропередач.

Edik Minasyan, ACTIVITIES OF "TUFENKIAN" FOUNDATION TO IMPLEMENT THE ECONOMIC DEVELOPMENT PROGRAMS OF THE REPUBLIC OF ARTSAKH AT THE END OF THE 20TH CENTURY AND THE TWO DECADED OF THE 21ST CENTURY. The article examines the large-scale work done by the Tufenkian Charitable Foundation in the field of the development and implementation of programs aimed at the development of Artsakh's economy. In addition to investing in Artsakh's economy, the foundation has implemented programs that have enabled people to develop their economy, become owners, stay in bordering villages, create safe and comfortable conditions for resettlement, expand housing, create infrastructure: electricity, roads, drinking water, irrigation, overcome poverty, etc.

The example of the implementation of the sponsorship program of the newly built village of Arajamugh in the Hadrut region reveals the details of the implementation of a very important economic development program by the Tufenkian Foundation, owing to which three-room houses were built with fenced surrounding. We should note about the financial support for agriculture and livestock development: electricity, sewerage and drinking water systems. To provide jobs for the inhabitants, the foundation has created a 5-hectare pomegranate orchard, and only in 2017 six new houses in the village were commissioned. Owing to the implementation of these economic programs through the efforts of the Foundation, in 2008 Arajamugh village was formed as a separate community, including Arajavan and Araksavan settlements.

The analysis of the relevant facts shows the large-scale economic programs implemented in other regions of Artsakh, especially in Kashatagh, Karvachar, Shushi, Martakert and Martuni regions, in the capital city of Stepanakert, as a result of which many social problems were resolved, educational, cultural and social conditions were improved. From the above-mentioned programs the author highlights the economic programs called "Flour Mill" and "Technical Base", launched in southern Kashatagh in 2005-2007. These programs became a stimulus especially for the development of the grain production sector.

In the end, the author expresses pain and regret that most of the results of this extensive effective work are enjoyed by our neighbor, Azerbaijan, which has great occupier and aggresive aspirations towards Artsakh.

Keywords: foundation, economic programs, Artsakh, "tufenkyan" charitable foundation, stepanakert office, financial resources, agriculture, cattle breeding, housing, land amelioration works, canals, electric power lines.

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА

АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE

JOURNAL OF ARMENIAN STUDIES

2021, № 1

Գլխավոր խմբագիր՝ Էդիկ Մինասյան

Խմբագիր՝ Միքայել Մալխասյան

Տեխնիկական խմբագիր՝ Տիգրան Ղանալանյան
Սրբագրումը՝ Արմեն Մալխասյանի
Համակարգչային ձևավորումը՝ Միքայել Մալխասյանի

Հասցեն՝ 0025, Երևան, Աբովյան 52
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52
Address: 0025, Yerevan, Abovyan 52
E-mail: histcultjournal@gmail.com
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Աբովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

Տպաքանակը՝ 200